

Ծ Ի Լ Ն Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի

Բ. ՏԱՐԻ 1867 ԹԻԻ Գ.

ԱՊՐԻԼ

ԿԱՆՈՆԳԻՐԻՔ

Կանոնք և սահմանք զոր եղին աշակերտին Քրեարոսի ՚ի սուրբ Եկեղեցին
յեր վերանալոյ Տեառն ժողովալս ՚ի վերնարանն:

(Շարունակութիւն, տես թիւ Գ. երես 456)

Ը. Կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ, թէ զ¹ աւր պահս կարգեացեն յամենայն չարութենէ ՚ի մեղաց և ՚ի կերակրոյ, յառաջ քան զաւրն չարչարանաց փրկչին մերոյ և ապա արասցեն զաւրն չարչարանաց փրկչին մերոյ պասէք տեառն և տաւն յարութեան փրկչին. ընթերցցին զիրք մարդարեակաւնք և առաքելականք, սր պատմեացեն զչարչարանացն տեառն և դուշակումն յարութեան փրկչին, քանզի և ինքն իսկ տէր մեր Քրիստոս տէր տաւնից և տարեկանաց պահեաց զ¹ տիւ զ¹ գիշեր: Նոյնպէս և Մովսէս ՚ի Սինէական լերինն ՚ի ձեռն պահայն իբրեւ սիրելի բարեկամ խաւսէր ընդ Ասատուծոյ և մեծապէս պատիւ դրաւ եւլ յերկնաւոր արքայէն և ահեղ երեսաւք արքունական օրէնս և կանոնս բերելով իջանէր առ ժողովուրդն: Նոյնպէս և նախանձաւորն Հեղիաս ՚ի ձեռն քառասնաւրեաց պահայն մեծամեծ նշանս և զաւրութիւնս գործելով ապա կառավարեալ ասպատակէր յերկինս, և երեք մասնկունքն ՚ի ձեռն սրբ.

բաթեան պահայն 'ի մահուանէ թագաւորին սպրեցան . զի հրեշտակ Ստուռծոյ էջ առ նոսա , և զբոցն բորբոքեալ շիջուցին զթագաւորն 'ի գիտութիւն ճշմարտութեան ամին և ինքեանք բարի անուամբ կեցեալ արժանի եղեն արքայու թեան փրիստսի :

Թ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , թէ կատարումն ամենայն գրոց ընթերցցի աւետարան իբրեւ զինիք պատուական ամենայն գրոց և յսան կարգ ամենայն ժողովուրդն լուիցէ նմա զի աւետիք փրկութեան են յամենայն մարդկան բանիւ կենարարին :

Ժ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , թէ զինի պատեքին կատարեսցին Ֆ. աւր յետ յարութեան նորա , և արասցեն տաւն յիշատակի վերացման նորա առ Հայր յերկինս փառաւորեալ :

ԺՅ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , թէ 'ի զատկէն մինչեւ 'ի Վ երորդ աւր վերացման նորա ուրախութիւն և ցնծութիւն եղիցի , զի աւուրք յարութեան են և փեսայն յառաջատի . ապա յետ տաւնի վերացման պահեսցեն , և դարձեալ Ֆ երորդ տաւն կատարեսցի իբրեւ զառաջին զատկին դառն զենցի :

ԺԶ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ եկամուտ ոք կամ բնակաւոր որ ոչ գիտէ զհաւատս ճշմարիտ Եկեղեցոյ սրբոյ և զկարգս և զարէնս որ կարդեալ է 'ի նմա մի լիցի առաջնորդ և հրամանատար յեկեղեցոջ և մի կարգեսցի զայնախիտն զգոռնկալեալսն և ըզնոցեալսն և զոյլագործսն յերեցութիւն կամ 'ի սարկաւադութիւն և կամ այլ ինչ սպասաւորութիւն Եկեղեցոյ մի մերձեցուցեն , զի մի կարդեալք ընդ նոքաւք թիւրեսցին . զի եթէ ստուէրք հանդերձերոյն Մովսէսի զանարատն ընարէր 'ի սպասաւորութիւն նորոյ ուխտիս է միջնորդ :

ԺԷ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ խաւսեցաւ Ստուռծ ընդ Աբրահամու և ասէ . եթէ թրխտեսցի մանուկ ձեր ընդաւրեսց և այն եղիցի նըշանակ ուխտին յաւիտենական ընդ իս և ընդ ձեզ . լինէր նոյն ուխտ և ընդ Մովսէսի հրամանն աւետալ Աբրարէն , մշակաւ զպայիւ սրսկել ջուր զժողովրդեամբն որ գուշակէր զմկրտու

յերայ և եթէ իցէ 'ի միջի նոցա մի թողցին զնա, այլ որոշեալ
ցեն և զատուացեն 'ի բայ յինքեանց և մի կայցէ 'ի միջի նո-
ցա, զի մի արմատ դառնութեան 'ի վեր երեւեալ պղծեացին
նովա բազումք:

ԺԷ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատու-
թեամբ, եթէ ոք Հրեայ կամ հեթանոս եկեացէ և խառնա-
կեացի եկեղեցի և դարձեալ թողցէ և երթիցէ յիւր բնակու-
թիւն և դարձեալ կրկնեացի և եկեացէ 'ի նոյն պաշտաւն զոր
անարգեացն, մի ընդունիցիք և մի խառնիցիք 'ի մէջ ձեր,
այլ որոշեալ զատուացէ 'ի միջոյ ամենեցունց և կայցէ 'ի նմին
կարգի ուր էք զառաջինն և մի հաղորդեացին ընդ նմա որք
ճանաչեն զնա:

ԺԸ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատու-
թեամբ, եթէ ոք փոխ տայ և առնու վաշխա և տոկոսիս և
չահի չահս սոբահոթեան, այնպիսին մի համարեացի ընդ հա-
ւասացեալն և մի կայցէ 'ի կարգ պաշտման քահանայու-
թեան, ոչ լիցէ զոր ետ պատուէր արարին Մովսէսի թէ
պատուիրեա՛ որդւոցն իտրայէլի զի մի պահանջեացեն զփոխս
'ի մերձեանս ամին թողութեան և ամին երրորդի: Որչափ եւս
առաւել պատժոց արժանի համարիցիք զայժմուս:

ԺԹ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատու-
թեամբ, եթէ չէ իշխանութիւն քահանայապետի կամ երիցու
և ո՛ր իցէ առաջնորդ եկեղեցւոյ առանց իւրոց պաշտաւնակցա-
ցրն առնել զիրս ինչ յեկեղեցւոյ, բայց կամաւք և միաբա-
նութեամբ ամենեցունց արտոցեն զոր ինչ կ'ամինն, զի մի լի-
ցի տրամութիւն և հերձուածք 'ի միջի իւրոց, զի 'ի միա-
բանութենէ ամենեցուն և քարոզութիւն հաւատարիմ լիցի և
հաւան հաստատուն, որպէս և փրկիչն ասէ թէ ուր երկու
և երեք ժողովեացին վասն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա:

Ի. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատու-
թեամբ, թէ 'ի կարգէ քահանայութեան ընտրեալքն անա-
բառքն որ սուրբ 'ի մամնայէ իցեն յարինաց և կարգի եկե-
ղեցւոյ հմուտք եթէ և անարգաց ոք իցէ 'ի քահանայապե-
տութիւն և 'ի զխաւորութիւն կացուացեն միջնորդ լինել ընդ-
մարդիկ և ընդ Աստուած զի երեւեացի զլուխ և առաջնորդ
ամենեցուն զի 'ի ձեռն նորա չարութիւն և բարութիւն, մեզք

խանութեամբ իրրեւ զքահանայ և կամ քահանայ աշուտ թեամբ դորժեացէ ինչ առանց յաւրինաց և իրաւանց . այլ արդարութեամբ և անակնառութեամբ :

ԻԵ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , թէ մի ոք անարդեացէ և անդոնեացէ և արհամարհեացէ կարցի զքահանայն թէեւ կարի ոք անարժան և անարդաց իցէ , զխտայէ՛ զի Ստուած անարդէ զի Ստուծոյ սպասուոր է ձեզ ՚ի բարիս և համարս ապրց՝ ընդ հոգւոյ ձերոց , ոչ զրեալ է զիշխան ժողովրդեան քո մի բամբաստոցես :

ԻԶ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , թէ սրք են յաստիճան դատաւորութեան և իշխեն առնել դատաստանեթէ չթիւրեացի , եթէ աշտիցէ երեսոց և պարտաւորեցէ զարդարն և արդարացուցէ զբարատորն , մի եւս կացցէ ՚ի կարգ դատաւորութեան և պատահեալ կշտանքեացի զի ոչ ինացաւ զզրեալն աստուածային ձեռանքն յարէնան Մովսէսի թէ մի խտարեցուցես զիրաւունս ՚ի դատաստանի և կաշառ ՚ի վերայ իրաւանց մի առնուցուս :

ԻԿ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ ոք ելանիցէ աշխարհէ ճշմարիտ վաղխճանաւ և կամ խողխողեալ անաւրինացն վկայ հաւատարիմ վտան անուան Փրկչին , խոտտիանելով զֆրիստոսի նեղութիւնս , որ վտան անուան նորա լինի , արասցեն զյիշատակս նոցա յառուր մահուան նոցա և զնշխարս սակերաց նոցա ՚ի սլատիւ առեալ վառաւորեացեն զֆրիստոս որ ես նոցա զայսպիսի համբերութիւն յորդորումն և ՚ի թողութիւն մեզայ մերոց :

ԻԸ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ թագաւորք որք ունին զհաւատս Եկեղեցւոյ որբոյ և խոտտովանին ՚ի ֆրիստոս իշխանութիւն լիցի ընդ քահանայս ՚ի բեմի կալ իբրեւ զԴաւիթն որ և զնայն էին ըստ մարդարէութեան , եթէ թագաւոր յուսացաւ ՚ի Տէր ողորմութեանց Բարձրելոյ , նա մի՛ զրկեացի , բաց այլ ինչ մի համարձակեացեացի գուցէ որպէս Զողիայն պատահեալ իցցէ :

ԻԹ. կարգեցին սուրբ առաքեալքն և եղին հաստատութեամբ , եթէ ՚ի պաշտման Եկեղեցւոյ աստոցեն զսաղմոս և զսարճ՝ ու թիւնս Դաւթի պաշտել աւր ըստ արէ յամենայն ժամ

քահանայութեան և աւրհնութեամբ զուգեացին . ըսոյց որպէս Մովսէսի պատուիրէր արարիչն Աստուած թէ պատուիրեա՛ նոց որդւոցն խորոյէլի . Ես եմ տէր Աստուած ձեր , պատուիրա՛ նոց իմոյ զդուչնացարուք և մի՛ դնայցէք ըստ կրանիցն Ե՛ղիպտացւոց ուստի ելէքն և ըստ դնացից ֆանանացւոց մի՛ դործիցէք : Եւ ասէ մարդ ոք մարդ առ ամենայն ընտանու՛ թիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեացի յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ , Զարականս դասեր քո մի՛ յայտնեսցես , զարականս քեռ . քո թէ առ 'ի հաւրէ իցէ կամ առ 'ի մաւրէ մի՛ յայտնեսցես . զարականս կնոջ հաւր քո մի՛ յայտնեսցես . զարականս հաւրաքեռ . քո մի՛ յայտնեսցես . զարականս քեռ որդւոց քո մի՛ յայտնեսցես պղծելով ընդ նոսա : Այնպէս և յերկրորդումն կարգեաց յաւրէնսդ ինն Մովսէս և ասէ . անիծեալ լիցի որ ննջիցէ ընդ կնոջ հաւր իւրոյ , զի յայտնեաց զաներեւոյթս հաւր իւրոյ . անիծեալ լիցի որ ննջիցէ ընդ քեռ իւրում , որ առ 'ի հաւրէ իցէ կամ առ 'ի մաւրէ և ատացէ ամենայն ժողովուրդն եղիցի՛ , եղիցի : Նոյնպէս և սահմանեալ առաքելական կանոնաց , մարդ ոք մարդ առ ամենայն ընտանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեացի կամ շնութեամբ կամ ամուսնութեամբ , մինչեւ 'ի չորրորդ զարմն չունի իշխանութիւն առնել :

ԿԻ . Եւ արդ՝ զայս ամենայն զոր ինչ կարգեցին և եղին սուրբ առաքեալքն , ոչ եթէ անձանց իւրեանց միայն կարգեցին , այլեւ այնոցիկ որ զկնի իւրեանց լինելոց իցեն . քանզի կասկածէին թէ պատրաստեալ են դայլք զգեճուլ զգեստ գառանց և առնել կոտորած 'ի մէջ հաւտիցն ֆրիստոսի . քանզի ոչ եթէ նոցա պէտք ինչ էին կարգաց և աւրինաց որ ինքեանք իսկ էին աւրէնսդ իրքն զի խրատեալք և վարժեալք էին 'ի ճշմարտ վարդապետէն և մսիթարիչ Հոգին սուրբ բնակէր 'ի նոսա . զի զոր աւրինակ ետ կարգել նոցա Հոգին սուրբ զկարդս և զաւրէնս զայնոսիկ , առաջնորդեսցէ նոցա ըստ կամաց իւրեանց . զի որք ընկալան 'ի Տեառնէ զղաւրութիւն և զիշխանութիւն զիարդմարթ էր թէ յայլմէ մեքէ դնիցի նոցա աւրէնք . նաև Պաւղոս և Տիմոթէոս շրջէին 'ի կողմանս Ասորոց և Կիլիկեացւոց զոյն իսկ զայս աւրէնս՝ պատուիրէին զառաքելոցն միմեանց : Եւ որք էին ընդ ձեռամբ առաքելոցն աշխարհականք ամենայն քարո՛

ժանի եղաք անուանել և թուել 'ի թիւ այնոցին, որք խոստովանին և կարգան զանուն նորա . և ուրանամք և հեռանամք յայնցանէ որք խաչեցին և ուրացան զնա . նաեւ քահանայք ժողովրդեանն գային 'ի ծածուկ և խոստովանէին ըզֆրիստոս և վասն զի սիրէին զգլխաւորութիւն ժողովրդեանն, ոչ կարէին նոքա յայանապէս խոստովանել և մոռացան նոքա զդրեալն, որ ասեն թէ Տէր սրտագէտ է, և ոչ հաստատին կամակորութիւնք առաջի նորա : Եւ իբրեւ լուսն հարք նոցա զայս որդւոց իւրոց, սպառնացան յոյժ ցամամք, ոչ զի հաւատացին 'ի ֆրիստոս այլ զի յանգիմանեցին և առակեցին զխորհուրդս հարց իւրեանց առաջի ամենայն ժողովրդեանն և դատաւորաց և ազգաց հեթանոսայ : Բացց հաւատացեալք Հրէայք և որդիք քահանայապետիցն յարեցան առաքեալն և ոչ երբէք հեռանային 'ի նոցանէ զի տեսանէին զառաքելոցն, թէ զոր ինչ ուսուցանէին բանիւք զնոցն և արդեամբք ցուցանէին առաջի ամենայն ուրուք և եղեն քարոզք ճշմարտութեան ընդ առաքեալն բանին կենաց . և յորժամ վաճանդ հալածանաց վասն քարոզութեան որ գայր 'ի վերայ առաքելոցն, առաւել եւս ուրախ լինէին և կցարդ լինէին նեղութեանց նոցա և խնդութեամբ ընդունէին զտանջանսն որ գայր 'ի վերայ առաքելոցն . և խոստովանէին յայանապէս զֆրիստոս և զամենայն աւուրս կենաց իւրեանց քարոզէին զֆրիստոս առաջի Հրէից և հեթանոսաց և սամարացւոց : Եւ յետ վախճանելոյ առաքելոցն եղ'ն նոքա առաջնորդք քարոզք և հրամանատարք աւետաւարանին Եկեղեցւոյ սրբոյ և զոր ինչ աւանդեցին նոցա առաքեալքն ընկալան նոքա և քարոզէին և ուսուցանէին զամենայն ժամանակս 'ի ժողովուրդս և ամենայն հեթանոսս Նոյնպէս աւանդեցին և նոքա 'ի վախճանի իւրեանց և ուսուցին աշակերտացն իւրեանց զամենայն ինչ զոր միանդամ ընկալան առաքելոցն : Եւ զոր ինչ գրեաց Յակորոս յերուսաղէմէ, Յովհաննէս յԵփեսոսէ, և Մարկոս Սղէքսանդրիայ, Սնդրեաս 'ի Փոիդիայ և Ղուկաս 'ի Մակեդոնիայ, Թովմաս 'ի Հնդկաց և Պողոսի առաքելոյ թուղթքն ծ'ր . որ ընթեռնուն յամենայն Եկեղեցիս ընդ ամենայն տեղիս : Նոյնպէս ընթեռնուն միաբան զսրժք առաքինութեան նոցա, զսր գրեաց Ղուկաս, զի այսմ ծանկոյեն առաքեալք և մտրդարէք և հին կրտակարան

նուն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ . ուսուցէ՛ք նոցա պա-
հել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ-
ձեզ եմ զամենայն առւերս մինչեւ 'ի կատարած աշխարհի .
Եւ որպէս պատուիրեաց նոցա Տէր, ըստ նմին արինակի թրո-
եաւ վաղվաղակի քարոզութիւն աւետարանին ընդ ամենայն
տիեզերս . և յորժամ այց առնէին միմեանց և լինէր քննա-
թիւն ինչ, դային և հաղորդէին միմեանց 'ի պաշտաւն և յա-
ղաւթս և 'ի բանս մխիթարութեան .

Կարգեցան քահանայապետք, գլուխք և առաջնորդք
քարոզել և աւետարանել և ուսուցանել զամենայն տիեզերս,
որպէս և հրամայեաց նոցա առաջնորդութեամբ Հոգւոյն սրբոյ .

Ա. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան Երուսա-
ղէմ և ամենայն աշխարհն Պաղեստինացւոց և Սամարացիք և
Փղշտացիք և դաւառն Սրաբացւոց, Փիւնիկէ, և բնակիչք
կեսարու 'ի Յակովբայ առաքելոյ, որ եղև հրամանատար և
առաջնորդ Եկեղեցւոյն որ յերուսաղէմ շինեցաւ Սիովն :

Բ. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան առաքե-
լոյն Աղեկանդրիայ մեծ, և Թեպայիս և ամենայն Եգիպտոս
և ամենայն աշխարհն Փիլովնի մինչեւ 'ի սահմանս Հնդկաց 'ի
Մարկոսէ աւետարանչէ զի նա եղև անդ հրամանատար և ա-
ռաջնորդ, շինեաց Եկեղեցիս և կարգեաց 'ի նմա քահանայս
և պաշտօնեայս :

Գ. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան առաքե-
լոյն Հնդիկք և ամենայն դաւառքն որ շուրջ զսովաւ են մին-
չեւ ծովն վերջին 'ի Թովմայէ առաքելոյ, նա եղև գլուխ և
առաջնորդ, շինեաց Եկեղեցիս և կարգեաց քահանայս և
պաշտօնեայս :

Դ. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան առա-
քելոյն Անտիոք, և ամենայն Սուրիա և Կիլիկիա և Գաղատիա,
մինչեւ ցՊոնտոս 'ի Սիմովնէ վիմէ զի նա՝ եղ. զհիմունս Եկե-
ղեցւոյ Անտիոք և եղև անդ գլուխ և առաջնորդ և քարոզ,
հաստատեաց զԵկեղեցին և կարգեաց քահանայս և պաշտօ-
նեայս, և եղև անտի մինչեւ 'ի Ժամանակն յորում ել նա 'ի
Հռովմ վասն Սիմովնի կախարդի :

Ե. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան մեծն Հը-
ռովմ քաղաք և ամենայն Խոաղիա, և Սպանիա և Բիւրխոսա-

ԺԱ. Իսկ Պաւղոս առաքեալ համաշունչ աշակերտաւքն , շրջէր ընտանեբար հողացեալ ընդ ծով և ընդ ցամաք ընդկողիս հեռաւորս , զկողմանս հեթանոսաց , զհիւսիս և զարեւելս , զհարաւ և զարեւմուտս , լի առնէր աւետարանաւն ֆրիստոսի հաստատէր զհիմունս Եկեղեցւոյ , խրատէր և կարգէր քահանայս և պաշտանեայս :

ԺԲ. Բայց այլ առաքեալք ընկերք նոցա և առաքելակից չոքանն 'ի տար աշխարհս բարբարոսաց , աշխարհս հեռաւորս ըստ մարգարէութեան (Մովսէսի թէ կացոյց սահմանս հեթանոսաց ըստ թուոյ հրեշտակաց ըստ ՀԲ. լեզուաց յաշտարակաշինութենէն եւ թանասուն երկուս ըստ լեզուաց լեզուաց պատգամաւորք , քարոզք և առաքեալք առաքելցան 'ի Տեառնէ ընդ ոլորտս աշխարհի և շրջէին տեղովք 'ի տեղի , և քարոզէին զաւետարանն արքայութեան , որպէս յաշտարակէն ցըրումն : Նոյնպէս 'ի խաչէն ժողովումն և միաբանութիւն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ 'ի հաւատս ճշմարտութեան և սուրբ նշանաւք և ճշմարտ բժշկութեամբ հաւանեցուցանէին աշակերտէին և ուսուցանէին , շինէին եկեղեցիս և կարգէին քահանայս և պաշտանեայս և կատարեցան բարի անուամբ և մեծ նահատակութեամբ անուն Յիսուսի ֆրիստոսի և այսպէս երթեալ զհետ մարգապետութեան նոցա , աշակերտքն նոցա մինչեւ 'ի վախճան աշխարհիս : Իսկ Ղուկաս աւետարանիչն , որում եղեւ փոյթս այո գրեաց հողեբարձութեանց զամենայն առաքինութիւնս և զկարգս և զգործս պաշտաման և զարէնս քահանայութեան նոցա , թէ որ կողմ չոքանն իւրաքանչիւր սք 'ի նոցանէ փութով առանց ասպղերոյ , և յաճախագոյն քան զայս գրեաց Ղուկաս և ետ 'ի ձեռն Պրեակիայ և Ակեղայ աշակերտաց իւրոց , որ յարեալ էին 'ի նա մինչեւ յաւուր մահուան իւրոց , որպէս և յարեալ էր 'ի Պաւղոս Տիմոթէոս և Տիտոս , և Մրիստարքոս , որ էր 'ի Լիւստրա և Տիսիսիմոս , և Տիմոս , որ էր առաջին աշակերտ առաքելոցն , և այլ բազում աշակերտք նորա մինչեւ ելանել նորա 'ի Հռովմ , յորժամ եկաց ընդդէմ նորա Տէրտիղոսն և զլիսատեցաւ 'ի Ներոն կայսրէ սուսերաւ , նախ Սիմոն Պետրոսի Հռովմ քաղաքի և եդան անդ մեծաւ պատուով ըստ արժանի իւրեանց գովութեան , և տեսեալ բազմամբոխ մարդկան զմեծ նահա-

ԳՍՐԵԳԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն. Տես Թիւ Գ. երես 132):

ԵՐԱՆՈՒՀԻ

Թէ ընդունի, եղբայր, մեր երկնաւոր հայրը
Նըրա վերջին ուխտն որ՝ նա արաւ քեզ համար
Երբ այն դուժըն առաւ թէ դու այս բերդ մըտար:
Այս էր նրա սուրբ ուխտը, իմ հոգի Գարեգին,
Որ ինձ գրկումն առած՝ արաւ տէր Յիսուսին:
Ասաց, «Տէր իմ Յիսուս, կը նուիրեմ քեզ այս կոյս
Միայն թէ շունչ տաս ինձ և աչքերիս լոյս,
Որ մի վերջին անգամ իմ որդին ես տեսնիմ
Եւ գրկումըս առած, վերջին անգամ օրհնեմ:
Եւ ասեմ, Գարեգին, քո հայրենեաց համար
Զոհիր քո փառք, քո կեանք, զոհիր և քո հանճար:
Թէ եւ քո հայրենիք քեզ ապերախտ լինի
Մի լինիր դու նըրան մի հայրատեաց որդի:
Այլ թափիր քո արիւն, ու վատնիր քո հանճար
Մինչեւ որ կանգնուի մի ազատ սուրբ տաճար,
Ուր տեղ, որ ամբողջ ազգն միտքան ուխտ արած
Սիրտ սըրտի յարելով և ձեռք ձեռքի տուած,
Մշատէ հայրենիքն ու սուրբ Եկեղեցին
Այն խուժ դուժ ազգերէն, որ եկան գերութեցին,
Արդ և ես եղբայր իմ, լըսելով այս ուխտը
Ողբ ու կոծ անելով՝ շարժեցի նրա գուժը,
Մինչեւ որ վերջն ու վերջը հաճեցաւ ինձ թողնել
Մաղաւարտ դըլուխս և թուր ձեռիս առնել,
Եւ գալ Մուշեղի հետ նախարարաց ատեան
Ասել նրանց յատուկ, որ քեզ ազատել հոգան»:
Այսպէս, իմ Գարեգին, Աստուած օգնելով մեզ
Ազատեց քեզ բանտէն և մեր մօր նուիրեց քեզ:
Արդ փութամք գընանք էլ, մեր խեղճ մօր գըրկումը
Եւ վարատենք նըրա մահատու տըրտումը:

ԾԵՐՈՒՆԻՆ

Ո՞վ օրհնած, որդեակք իմ և դու եղբայր Մուշեղ

» Զի մենք ենք միմիայն Հայաստանեայց բուն տէր :
Այս խօսքերն էին, մայր, որ արին մեծ վարդան,
Խօսեցաւ զէհ հողւով այն ամեն բազմութեան :

ՎԱՐԳԱՆՈՅՇ

Ուրեմն, որդեակ իմ, մօտեցաւ այն ժամը,
Որ Հայոց աշխարհին աղատանու դասը
Ամենքը միասին սիրտ սրտի հետ կապուած,
Հայրենեայ որդիքը քնէն զարթեցուցած
Պիտի ազատեն մեր հայրենիքն ու ազգը

ԳԱՐԵԳԻՆ

Այդ խընդիրը, մայր իմ, միայն Արտազուղ աշտը
Կարելի է վըճուէ թէ կամք է Աստուծուն :

ՎԱՐԳԱՆՈՅՇ

Ե՛րբ Գարեգին, ասա՛, էգուց առաւօտուն

ԳԱՐԵԳԻՆ

Ո՛չ, մայր իմ, այդ բանը, գաղտնի է քո որդուն

ՎԱՐԳԱՆՈՅՇ

Ա՛րդ, պատրաստիր Մուշեղ, իմ սիրելի որդուն
Սաղաւարտն ու թուրը, որ հէնց այժմէն օրհնեմ :

ԵՐԱՆՈՒՀԻ

Մայր իմ, մի մոռանար, որ ես էլ պատրաստ եմ

(Գառնաւով բերի բոլորն)

Ա՛րի, դայեակ խընդրեմ, տուր իմ ազեղն ու թուրը
Սաղաւարտն ու զըրահ և նիզակն ու սուրը :

ՎԱՐԳԱՆՈՅՇ

Այո՛, Երանուհի և քեզ պարտ եմ զըրկել
Եւ արտազուղ աշտում իմ ազգին նուիրել,
Տէ՛ր, դու որ լըսեցիր իմ ջերմեռանդ ուխտը
Այժմ ընդունիր խընդրեմ և իմ միակ դուստրը :
Ա՛րիք, մօտս դառնուկներս, որ տամ ձեզ իմ համբոյր
Եւ ասեմ Աստուծոյ ահա՛ եղբայր և քոյր,
Որ սուրբ Եկեղեցուն և իրանց հայրենեայ
Աղատութեան համար զո՛հ են անում իրանց :

ՏԵՍԻԼ Ե.

ԵՐԱՆՈՒՀԻ ԵՒ ԴԱՅԵԱԿ

ԵՐԱՆՈՒՀԻՆ (Մաղաւարտի գլխին և լուսին ու լուսն յետին)

Ձուարթ եղիր , դայեակ իմ , ա՛հ արեւն աւետեց ,
 Որ Աստուած երկընքէն մեր աղերսն ընդունեց :
 Ո՛վ երկին և երկիր , ո՛վ լեռինք , դաշտօրայք
 Դուք եղէք մեզ այսօր ահանաւես վըկայք :
 Ահա թուրն 'ի ձեռին մենք 'ի մահ ենք գիմում ,
 Որ Բրիստօսի խաչը պաշտօղանենք մեր երկրում :
 Եւ դուք ո՛վ քրիստոնեայք , իմայէք , որ մենք , Հայք ,
 Իշխանք և նախարարք , սեպուհք , աղատօրեայք ,
 Գիւղականք և հովիւք և մինչեւ խաշնարած ,
 Ամենքըս միաբան հողւով մարմնով զինուած
 Դէմ առ դէմ կրուում ենք Ձըրադաշտայ դեմին
 Եւ յաղթում ենք նրանց գիւահար մողերին :
 Թող գիտենան նաեւ հայրենեաց մեր որդիք ,
 Թէ այսօր մենք եւս , թէ կանայք թէ աղջիկք
 Ամենքըս միասիրտ , միաբան միադունդ
 Մեր Տիրոջ Բրիստօսին եղել ենք զինագունդ :
 Այո՛ , մենք հայրենեաց լինելով նահատակ
 Թողնում ենք նրանց այսօր մի այնպէս յիշատակ՝
 Որն որ դարէ 'ի դար և սերընդէ սերունդ
 Լինի նրանց օրինակ , աղատութեան սընունդ
 Այս ի՞նչ ձայն է դայեակ , որ դալիս է հեռուանց
 Խընդրեմ , դնա՛ նայիր ու տես , լըսիր վերեւանց :

Երանուհին ուղարարութեամբ ահանջ է դնում հեռուանց եկած յայնին , որն որ էս
 չի գնում , մօտենում է : Դայեակը գնում է ու զրանի բարձրէն նկատում արեւարանի
 խորը , որ պեղե զքրտերի յայնն է գալի :

ԴԱՅԵԱԿ

Արի՛ , Երանուհի : Գարեգինն է զօրքով ,
 Որ դալիս է դէպ 'ի մեզ օրհնութեան երգերով :

Երանուհին իսկոյն գնում է դայեկի մօտ և այն բարձր պեղէն մօտի է պալե Դարեգու
 նին և նրա գլխին՝ որո՞ւ պետէն սիրտը շարժելով՝ ծնկան զրայ է ընկնում դայեկի
 հետ միասին և յետեւերին իրար պալով ու իրանտ եւ երգելով պարասխանում են զօր
 Իերին :

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԸ

Ո՛վ տէր մեր Աստուած ,
 Դու մեր Հայ ազգին
 Դարձու քո նայուած
 Արա՛ նրա հոգին ,
 Հայրենեաց սիրով
 Վառուն վառվրռուն
 Աստուծոյ լուսով
 Փայլուն փայլիրլուն :

ԶՕՐԱԳՈՒՆԻԸ

Չարթիք մանկունք արդ Հայկազունք
 Մեր աշխարհը լուսաւորենք
 Յիշէ՛նք , որ մենք Հայկայ թողունք
 Արեւելքում աղնիւ ազգ ենք

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԸ

Ո՛վ տէր մեր Աստուած ,
 Դու մեր աշխարհին
 Արա՛ քո սուրբ այց ,
 Օրհնէ՛ մեր ազգին :
 Տուր մեզ զօրութիւն
 Որ արիանանք
 Յաղթենք թըշնամուն
 Եւ աղատանանք :

ՏԵՍԻԼ Զ.

ԵՐԱՆՈՒՀԻՆ , ԴԱՅԵԱԿԸ , ԳԱՐԵԳԻՆՆ ԵՒ ԶՕՐԱԳՆԴՈՎԸ

ԵՐԱՆՈՒՀԻ

Արի . . . արի . . . եղբայր իմ , Գարեգին
 Յոյց սուր ինձ , ո՛ւր է մեր անօրէն թըշնամին

ԳԱՐԵԳԻՆ

Ահա՛ , Երանուհի , Աւարայրի դաշտը ,
 Ուր սեպուհն Արանձար և իր զօրեղ վաշտը
 Չարկին , սատակեցին Յազկերտի դընդերը ,
 Որ տեղ են և հիմա Մուշկանի խըմբերը :

Ահա՛ և քաջ վարդանն իր քաջազուն գընդով
 Արշաւում է գէպ 'ի Տըղմուտի այս կողմով :
 Ես էլ իմ գընդովը յարձակում եմ ահա ,
 Օգնական լինելու մեր մեծին վարդանայ :
 Արդ , ըշտապիր , քոյր իմ , վեր ա՛ռ քո զէնքերը
 Զի ինձ են ըսպատում իմ կըտրիճ զօրքերը :

ԵՐԱՆՈՒՀԻ

Գնանք , եղբայր իմ , գընանք , բայց ո՛ւր է քաջ Մուշեղ :

ԳԱՐԵԳԻՆ

Նա գընդի գլուխն անցած , դիմեց գէպի այն տեղ ,
 Ուր որ քաջըն վարդան նըշանակեց նըրան ,
 Որ Սըրուանձտեան գընդով օգնական ընի իրան ,
 Պարսից Մատեան գունդը միասին ջըրուելու :

ԵՐԱՆՈՒՀԻ

Դիմէնք մենք էլ եղբայր , այդ փառքին հասնելու :

ԳԱՐԵԳԻՆ

Յառաջ բերէք զինուորք , ճերմակն իմ երիվար : (Երանուհի-այն)
 Երանուհի , արի՛ դիմենք արիաբար ,
 Ահա՛ փողերն հնչում , լըմբուկներն են ածում

ԵՐԱՆՈՒՀԻ

Ա՛հ , եղբայր իմ , եղբայր կըռւում են կըռւում :

ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԵՐԱՆՈՒՀԻՆ (Մէտին)

Ա՛հ , գայեակ իմ , գայեակ արի՛ իրար համբուրենք

ԴԱՅԵԱԿԸ (Թիւրք բաց անելով)

Եկէք , որդեակք իմ , եկէք իրար ողջագուրենք

ՏԵՍԻԼ Է.

ՄԻ ՔԱՆԻ ԶԻՆՅԻՆՈՐՆԵՐՈՎ ՄԻ ԶՕՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

ԶՕՐԱԿԱՆԸ

Տէր , քաջ արին Մուշեղ զօրադրուխն մեր
 Եւ արին մեծ վարդան ըսպարապետն մեր ,

Ընդդէմ Արեաց Մատեան մեծամուր, հզօր գընդին
 Բոլոր զօրագլխաց հետ յարձակում արին :
 Պատերազմն ըսկըսաւ և յանդուզն յարձակմամբ
 Միմեանց հետ բախուերով անհնարին բըռնութեամբ
 Մեծ տագնապ, մեծ սարսափ միմեանց են ըսպառնում :
 Եւ երկու կողմերէն շատ զօրքեր են ըսպանում :
 Ա՛րդ, ըշապակը, տէր, զի արին մեր վարդան
 Բոլոր զօրագլխաց արձակեց իսիտ հրաման ,
 Որ հէնց իսկ այս ժամուս և մենք միահամուռ
 Յարձակինք և քակտենք Մատեանն այն մեծամուր :
 Այս հրամանն է, տէր իմ

ԵՐԱՆՈՒՀԻ

. Ա՛րդ գընանք, Գարեգին

ԳՍՐԵԳԻՆ (Դայեկն)

Օրհնէ՛, զայեակ, օրհնէ՛ քո Գարեգին որդին
 Եւ մի վերջին անգամ

Ամենք զասին զնոսմ են երգելով զբողոքէրէ երգը, Բայց դայեալը յեաները դէտէ
 երկնի բարձրացանելով առում է :

. Դու, օրհնէ՛ օրանց Աստուած
 Եւ տո՛ր քո զօրութիւն յաղթել քո թըշնամեաց :

ՏԵՍԻԼ Ը

ԴԱՅՆԱՆՐ (Առանձին ու դերագին զի գտր կանգ առնելն յետոյ)

Այս ի՛նչ տագնապ ահեղ, այս ժամուս ահաւոր,
 Մեր աշխարհն է սարսում, ո՛վ Աստուած երկնաւոր :
 Արդ, բաց արա՛ մեզ քո երկնային դըռները
 Եւ ընդունիր մեր զօրաց նահատակ սըրտերը :
 Յուզարկիր մեզ երկնէն մի բանակ հրեշտակաց
 Օգնական լինելու մեր քաջասիրտ զօրաց,
 Որ հէնց մի յարձակմով Պարտից Մատեան գընդին
 Մի հարուած հասցունեն և տապալեն գետին :
 Ընդունէ՛, ո՛վ իմ Տէր, այս աղերսն իմ առանձին
 Եւ մի տալ մեր զօրքերն նրա ուժգին հարուածին :
 Թէ միանդամ այն զունդն իր մէջ տեղէն քակուի

Պարտից զօրքն անպատճառ մեր զօրքէն կը յաղթուի . . .
Քայց այս ի՛նչ աղաղակ երկինք երկիր է բըռնել . . .
Դնամ, դիտեմ միանգամ, թէ կարող եմ տեսնել :

Դայեակը գնում է ու վրանի կշտի բարձր տեղէն դաշտն է նկատում :

Ո՛հ , ի՛նչ սարսուռ է այս , որ սըրտումս եմ ըզդում ,
Ի՛նչ անեղ տեսարանն ես աչքովս եմ տեսնում :
Ամպ , արև , հողմ՝ փոշի մարդկանց հետ կատաղած
Իրար են ջընջելու կարծես պատրաստուած :
Սաղաւարտներն ամեն կայծ ու բոց են ցայտեցնում
Սըրերն ու թըրերը կայծակներ շանթեցնում :
Ո՛հ , տազնապ ահաւոր , ո՛հ , ազէտ ահուելի
Երկինք երկիր կատղել իրար են կուլ տալի :
Ի՛նչ յանգուգն յարձակմով միմեանց եմ կոտորում ,
Որ սարերն ու գաշտերը թողում են , որոտում :
Վայ՛ ինձ , Հայոց դընդին ձախակողմը շարժեց ,
Ահա մեծ վարդան ինքն իր գունդն առաջ մղեց :

Դայեակն անկարող պատերազմի դաշտը դեռելը , էր ելած տեղն անշարժ և լռու
է ձուսմ մի քոտր , յետոյ նորէն վեր է կենում ու աչերը դեպի երկինք է բարձր
բացում :

Տէր , թէ որդուս արիւն քեզ պատարագ եղաւ
Ազատիր աղաչեմ , դէժ մեր Եկեղեցին . . . :
Ի՛նչ է այս , մեր զօրքերն են , թըշնամին ջրբուեցի՞ն . . .
Հապա ո՛ւմ ձայն է այս , որ ականջս է դալի :

Մի քոտր միջոց ակնջ է դնում :

Վայ՛ ինձ , լաց են լինում , վայնասուն են տալի :
. Տէր Աստուած , Գարեգինն է :
Վիրաւորուած . . . այո՛ . . . իմ որդին է :

ՏԵՍԻԼ Թ.

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԱՆՈՒՀԻՈՅ ԳԸՐԿՈՒԾ, ԴԱՅԵԱԿ ԵՒ ՁԻՆՈՒՌԻԲ

ԳԱՐԵԳԻՆ Չըստպար

Ա՛հ քոյր իմ , մեռնում եմ , մահացու է իմ հարուած :

ԵՐԱՆՈՒՀԻ ԿԵՃԵՑԱԸՎ

Դու հասիր օգնութիւն . . . ողորմած իմ Աստուած :

ԳԱՐԵԳԻՆ

Փառք քեզ տէր Աստուած իմ, որ արժանի եղայ
 Մեր սուրբ Եկեղեցւոյն լինել անմահ վրկայ .
 Մինչդեռ շէն և պայծառ քո սուրբ Եկեղեցին
 Առաքինի վրկայք հաստատուն պահեցին
 Ահա և ես Տէր իմ ըստ երկնաւոր կոչման
 իմ արիւն թափեցի քո փառաւոր անուան :
 Սրբ, ընդունիր այժմ իմ արիւն և իմ մահ
 Եւ նահատակայ մահուան հաւասար արա :
 Աղափր մեր ուխտը, այս դառըն հարուածէն
 Պաշտպանիր մեր աշխարհ դաւաճան վասակէն
 Մի տալ, Տէր, մի տալ մեր ազգին վասակներ,
 Որ սյսպէս չարաչար հասցունեն վրնամներ :
 Այլ դու միայն, դու, լէր միշտ ապաւէն
 Եւ վերացու մեր մէջէն իշխաններն անօրէն :
 Դու միայն մեր ազգին շքնչիր քո անմահ լոյս,
 Որ իր ազատութեան լինի մի արդար յոյս :
 Ահա, ես իմ հողին, . . . քո ձեռն եմ աւանդում
 Տուր, աղաչեմ քեզ Տէր, իմ ազգին ազատում . . .
 Ներիր դրա յանցանքին իմ թափած արիւնով
 Եւ նորոգիր նրա կեանք մի սթափած սերընդով . . .
 Ահ, իմ երանուհի . . . շունչը սպառեցաւ . . .
 Արդեօք և մեր մայրը . . իմ մահն իմացաւ :
 Արի, դայեակ իմ, արի . . . մօտեցիր իմ մօտ
 Եւ, զնա, ասա իմ վարդանոյշ մօր
 Թէ իր օրդին . . . Գարեգին նահատակ եղաւ :

ՏԵՍԻԼ Ժ.

ԾԵՐՈՒՆԻ ԿՐՕՆԱԻՈՐՆ ՈՒ ԱՌԱՋԻՆՔ

ԵՐԱՆՈՒՀԻ

Գարեգին, իմ եղբայր, տես միանգամ ո՞վ եկաւ :

ԾԵՐՈՒՆԻՆ

Եւ դու, Գարեգին, օրդեակ իմ, օրդեակ,
 վերջապէս եղար ուխտին նահատակ
 Եւ տուիր քո կեանք իբրեւ իսահակ
 Մեր Տէր Աստուծոյն անմահ պատարագ

Էրնե՛կ քեզ որդի՛ն, այսօր քո հողին
Մեծին վարդանայ և իր սուրբ գընդին
Հողւոց հետ մէկտեղ 'ի մէջ գըրախտին
Արժանի եղաւ Աստուծոյ փառքին :

ԵՐԱՆՈՒՀԻ

Հայր , միթէ՛ և մեր քաջ արին վարդան
Յարձակելիս ընդդէմ գընդին Մատեան
Պատարագ եղաւ Աստուծոյ անուան :

ԿՐԾՆԱՒՈՐԸ

Այո՛ , Երանուհի և նա այս վայրկեան
Հայրենեաց ուխտին իր կեանքը զոհեց
Եւ իր սուրբ արիւնն Աստուծոյ տուեց :

ԳԱՅԵԱԿ

Որդի՛ն , քո աղերսն ահա Տէրն ընդունեց
Եւ մեծին վարդանայ քեզ հաւասարեց :

ԳԱՐԵԳԻՆ

Ո՞վ ես դու հայրիկ . . . Աստուած զըրկեց քեզ ,
Որ վարդանայ մահը իմաց անես մեզ
Աստ ինձ հայրիկ , զի ուրախ եմ ես :

ԿՐԾՆԱՒՈՐԸ

Ես այն ծերուկն եմ , որդի կը յիշե՞ս ,
Որ պահակ դըրան բանտումն եկայ
Եւ քեզ շըղթայով կապկպուած տեսայ :

ԳԱՐԵԳԻՆ

Ս՛հ հայրիկ — ներիր — այժըմ իմացայ ,

Գարեգինն ուղած է ծերունայն որքը ընկեւ — կարող չմեխով գեղին է ընկած

Տ՛ուր աջգ համբուրեմ . . . ս՛հ չեմ կարող մեռայ :

ԿՐԾՆԱՒՈՐԸ

Ո՞վ իմ Գարեգին , սիրելի որդեակ
Ահա երկընթէն լուսեղէն հրեշտակ
Դընում են գըլխիդ վարդենի պըսակ

Եւ օծում են քեզ Հայոց նահատակ :
 Գեղ պէս, իմ որդեակ, և քաջըն վարդան
 Երբ կործանում էր գունդըն այն Մատեան
 Փոխարէն իր քաջ առաքինութեան
 Ընդունեց պըսակ նահատակութեան :
 Եւ դու Գարեգին, Աստուծոյ զաւակ
 Եղար մեր ուխտին օրհնած զուարակ :
 Ահա և այսօր մեր այս յաղթանակ
 Եկեղեցւոյն է անմահ յիշատակ
 Գընամ, տօնեմ այս օրըն փառաւոր,
 Ձի և ինձ կանչում է Աստուած երկնաւոր :

ԵՐԱՆՈՒՀԻ

Օգնութիւն հասիր, հայր, իմ խեղճ եղբօր
 Հողին աւանդում է տէր Աստուծոյ հօր :
 Օրհնութիւն, սաղմոս կարդա՛ առ Աստուած :

ԿՐՕՆԱԻՈՐԸ

Ահա, որդի, քեզ լըսեց տէր Աստուած
 Եւ իսկոյն կատարեց և քո խընդըրուած
 Ձի սուրբ երէցներ են գալի աստ :

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՂԵՒՈՆԴ, ԽՈՐԷՆ ԵՐԷՅՔ, ՄՈՒՇԵՂ ԻՐ ԳԸԳԻԵՐՈՎ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

ՄՈՒՇԵՂ

Ահ որդեակ իմ, Գարեգին, և դու ընկար նահատակ,

ԳԱՐԵԳԻՆ

Ասա, հայրիկ իմ Մուշեղ թէ տարանք մենք յաղթանակ

ՄՈՒՇԵՂ

Այո, որդի, դու տարար մեր յաղթութեան անմահ թագ
 Եւ մեր Հայոց սուրբ ուխտին այսօր եղար պատարագ
 Տէր, պարզեւիր մեր ազգին այս սանուս պէս զաւակներ :

ԳԱՐԵԳԻՆ

Եւ Հայկազուն զաւակաց իմ հօրըս պէս դայեակներ :

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ

Ուրախ եղիր Գարեգին, ահա Աստուած երկընքէն

Քն տանջանքին փոխարէն քեզ կոչում է այս երկրէն :

ԽՈՐԷՆ ԵՐԷՑ

Այսօր , արեամբդ Գարեգին օրհնուում է մեր աշխարհքը
Նոյնպէս անուամբդ , որդեակ իմ հուշակուում է մեր փառքը :

ԳՍԻԳԻՆ (Կէսամեռ)

Ո՛հ , ո՛վ իմ սուրբ հարք , դուք էք , տուէք ձեր աջն համբուրեմ
Եւ մի վերջին անգամ ձեր օրհնութիւնն ես առնեմ :
Դուք մեր ազգին , սուրբ հարք , իմ , պահապանն էք հըրեշտակ
Մէ թողէք որ օտար ազգք մեր ուխտն առնեն իրանց տակ :
Այլ օրն ՚ի բուն ձեր աղօթք մատուցէք տէր Աստուծոյն
Որ նա ինքն ուղարկէ քաջ հովիւներ Եկեղեցւոյն :
Նոյնպէս հարք իմ , դուք եղէք տէր Աստուծոյն աղօթարար
Որ իր շնչով յարուցանէ Հայոց ազգին ագառարար :
Ահա սրանք են իմ խնդիրք ... արդ ընդունիր տէր Աստուած ...
Վայ ինձ ... ընկալ Տէր իմ հոգի ... և ներիր իմ մեղաց ... Ընդուն

ՂԵՒՈՆԻ ԵՐԷՑ

Ահա՛ այսօր Գարեգին մի գունդ հրեշտակ երկրնքէն
Իրանց ձեռքով քեզ տուին մի լուսավառ թագ վարդէն :
Դու մեր ազգին զօհեցիր քո վըշտալի դառն կեանքը
Եւ քեզ ժառանգ ըստացար արքայութեան լոյս կեանքը :
Դու ես այսօր Գարեգին , մեր հայրենեաց նահատակ
Դու ես նաեւ Հայկազանց քաջալերող օրինակ :
Քն բարքն ու վարքը , որդեակ իմ , յիշատակ է և նըրանց
Որոնք իրանց արիւնը կը նուիրեն հայրենեաց :
Այսուհետեւ Գարեգին , քո անունը սիրելի
Դարուց ՚ի դար մեր ազգին պիտի լինի տօնելի :

ԽՈՐԷՆ ԵՐԷՑ (Դեպէ ժողովրդեան)

Ահա՛ այսպէս , Հայկազունք , Տէրն յայտնել է իր հըրաշք
Եւ ազատել մեր հարց ուխտն ու մեր Հայաստան աշխարհք :
Արդ , զարգանանք մենք , եղբարք , մըխիթարուինք Աստուծով
Նա չի թողել մեզ թըշուառ թէ յուսանք մենք հաւատով :
Այսպէս թէ դուք , ո՛վ Արդիք համբեր հողուով դուք միմեանց
Կըլնիք սիրող օգնական և միաբան միազգամ ,
Այն ժամանակ սուրբ Հոգիք և ամեն դասք արդարոց
Ձեզ օգնական կը լինին կատարելու արդար գործ :

Խոստովանողք, մարտիրոսք մեր Հայաստան աշխարհին
 Թող մեզ լինին օրինակ մինչ կատարած աշխարհին :
 Նրանց արեամբ Հայկազունք, շողախուած է մեր աշխարհք
 Եւ ամեն տեղ մեր երկրում երեւել է մեծ հրաշք :
 ԱԻԱՐԱՅՐԻ դաշտն այսօր պայծառացաւ ծաղկեցաւ
 Ձի մեր սուրբ Հարց արիւնով, ոսկորներով ցանուեցաւ :
 Ո՛ւր էք մըշակք Հայրենեաց, արիք դընանք այն դաշտերն
 Հընձենք այն ներմն որ արեամբ ոռոգեցին մեր պապերն :

ՎԵՐՁ

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Շ

Ծ Ի Լ Ը Ա Ւ Ա Ր Ա Յ Ր Ի Հ Ա Ն Դ Ի Մ Ա Ն

Թ Ո Ւ Ղ Թ Ռ Ռ Ի Մ Ի Ա Յ Է Ն

Գ Ա Լ Ֆ Ա Յ Ն Ա Ն Խ Ո Ր Է Ն Ե Պ Ի Մ Կ Ո Պ Ո Ս Ի Մ Ա Ս Ի Ն

Բարեկամիդ իմում խնդալ 'ի Տէր .

Գիտես 'ի հարկէ , որ վեհափառ կաթողիկոսը Պօլսէն Էջմիածին ուղեւորելու ատեն՝ Բերայի քարոզիչ խորէն վարդապետին ալ հետն առաւ և թէ քիչ մը ժամանակէն ետքը , յանուն Բերայի ժողովրդեան Հայրապետական կոնդակ ստացուեցաւ , յորում Ն . վեհափառութիւնը կը յայտնէր , որ յիշեալ քարոզիչը պիտի Էջմիածին մնայ իր զանազան ազգօգուտ ձեռնարկութեանցը գործակից ըլլալու համար և թէ յաստիճան եպիսկոպոսութեան բարձրացուցեր է զնա 'ի տրիտուր բարեմասնութեան նորա : Յայտնի բան է , որ այց կոնդակը լատաւորութիւն չէր կարող ունենալ այն ազգայնոց վրայ , որոնք որ խորէն եպիսկոպոսին (որովհետեւ եպիսկոպոս է մարդը) ինչ պատու ըլլալը արդէն շատ աղէկ ճանաչեր էին՝ քաջ տեղեակ ըլլալով անոր՝ Ռուսաստանի և Տաճկաստանի մէջ ըրած «պէտքեր» գործերուն : Եթէ դէմ առ դէմ նստած խօսակցէինք , պիտի հարցնէիք անշուշտ թէ ինչո՞ւ ուրեմն , վեհափառ Տէրը յիշեալ քարոզիչը լաւ մը չճանաչած առաւ հետը տարաւ իրրեւ ազգօգուտ և պիտանի անձ մը , իսկոյն եպիսկոպոսական աստիճան տուաւ անոր , իր կազմած « ուսումնական յանձնաժողովին » անդամ կարգեց , իր Հայրապետական կոնդակին մէջն ալ չափազանց դովեստներ տուաւ անոր կարծեցեալ արժանաւորութեանց : Իրաւացի է հարցումդ , բայց ես ատոր ուղղակի պատասխան մը տալէն առաջ՝ քանի մը բան ունիմ ըսելիք . նախ՝ խորէն եպիսկոպոսին թէպէտ իր խախտեան ուսումնարանին մէջ վարած պաշտօնին և ապա անոր Պօլսոյ ազգային վարչութենէն դտած ընդունելութեանը նկատմամբ , որ անուղղակի պատասխան մըն ալ կրնայ ըլլալ

հարցմանդ : Հարկ չէ ըսել, որ ես այժմ անոր ուսուցչական, վերատեսչական և մատենագրական գործունէութեան ամբողջ ու մանրամասն նկարագիրը անելու ոչ գիտաւորութիւն ունիմ և ոչ ժամանակ, այլ քանի մը եղերութիւնք միայն կը յիշեմ, որոնց մէջ կը փայլի Խորէն եպիսկոպոսի ներքին իսկական պատկերը ամենայն ճշդութեամբ և հաւատարմութեամբ :

Ուսուցչական գործունէութիւնը :

Խորէն եպիսկոպոսի պտուտախօս անձնագումովութեանց հաւատ ընծայող պարզամիտները կը կարծէին ՚ի հարկէ, որ նա իր ուսուցչական գործունէութեամբը մեծամեծ օգուտներ բերած կ'ըլլայ ուսումնարանին, տարօրինակ ծառայութիւնք ըրած կ'ըլլայ ազգի հանրութեանը՝ քաջովարժ հայկաբաններ պատրաստելով, իր աշակերտաց սրտին մէջ հայրենասիրական եռանդուն զգացմունք սերմանելով և աճեցնելով եւայլն : Ահա, անոր օրին ուսանող աշակերտներէն ըսածներս : Խորէն եպիսկոպոսը ազգասիրական սովորութիւն ունի եղեր միշտ դասատուութեան ժամերու սկիզբէն և վերջէն մէկ մէկ քառորդ ծայրատելու : օրինակի համար, դասը պէտք է սկսի առաւօտու ժամը 9 ին և տասէն քառորդ անցած վերջանայ : Իսկ նա դասարան կը դայ 9 1/2 ին և 10 ին կը վերջացնէ դասը : Շատ անգամ ալ նա իր դասերու ժամանակ բողբոլին բացակայ կ'ըլլայ եղեր զանազան սնտոի պատճառներով, որոյ յիշատակութիւնն անաեղի և աւելորդ կը համարիմ : 5/4 ժամին մէջ էլ կարելի է բաւական բան սորվեցնել անշուշտ : Բայց նախ դասերու համար սրոյուած էր 1 1/2 ժամ և ոչ թէ 5/4 և ինքը 1 1/2 ժամու համար ռոճիկ կը ստանար, և լաւ ռոճիկ : և երկրորդ այդ մնացած 5/4 ժամն ալ ըստ մեծի մասին իր չքնաղ անձին, իր փափուկ սրտի ազնիւ զգացմանցը, իր պուետական աւիւնին և այլ ասոնց նման անօգուտ բաներու վրայ իշխելով կ'անցնէ եղեր : Գազափար մը տալու համար՝ իր դասախօսութեանցմէ մէկին բովանդակութիւնը համառօտիւ մը մէջ բերենք : Պուետական եռանդին ինչ ըլլալը հասկացնելու համար՝ կ'ելլէ երկար բարակ կը սլատմէ աշակերտաց, թէ Լամարթինայ կամ պուետական փափուկ լեզուով խօսելով՝ Լամարթինայ ԴԱՇՆԱԿՔԸ թարգմանած ատեն ինչ անտանելի վհատեցուցիչ դժուարութեանց հանդիպեր է : Ինչպէս «Savez-vous son nom? oh, non!» կտորին վրայ երկու ամ

բողջ շարաթ քերան ու արտասուք թափեր է ու ինչպէս իր եղբայրն էլ ղինքը կը մխիթարէ եղեր և թէ վերջապէս յանկարծ գերբնական ազդեցութեամբ մը հայերէն համապատասխանիչ դարձուածը գտնելով « Ձիւր անուանն գիտեն կոչ : — Ո՛հ , ոչ » , արտասուախառն հրճուանօք կը վազէ եղբօրը վզին կը պըլլուի եւ այլն : Սրդ , հասարակ աննչան մահկանացուի մը թերեւս ներելի ըլլայ այսպիսի պաշտօնակատարութիւնը մը , բայց խորէն եպիսկոպոսներուն , որ իրենք ղիրենք յամենայն ժամ և յամենայն տեղիս տանեաց վրայ ելնած՝ ազղի բարերար , ազգասէր , ազղին յառաջ գիմութեանն ու լուսաւորութեանը նախանձաւոր , ազղին ցաւերովը վշտացող եւ այլն կը քարոզեն և բարձր 'ի գլուխ կը պանծան իրանց չունեցած արժանաւորութեանցը համար ու չըրած ժառայութեանցը , — ոչ միայն ներելի չէ , այլեւ սաստիկ դատապարտութեան , սողտանաց և պախարակութեան արժանի :

Վերաբնական Գործունէութիւնը :

6.—7 Դասարանով միջին կարգի դպրոցները gymnase առ հասարակ մէկ վերատեսուչ և մէկ տեսուչ կ'ունենան : Շատ տեղեր այդ ուսումնարաններու կառավարչութեանը ներքեւ ստորին դաւառական և ժողովրդական դպրոցներ ալ կը գըտնուին : Խալիպեան ուսումնարանի կառավարութեանը ներքեւ ուրիշ դպրոցներ չըլլալով մէկ վերատեսուչը և մէկ տեսուչը շատ փառաւոր կերպով պիտի կրնային , կ'ուզեմ ըսեմ ըսել չկրցան (բայց խօսքը ադոր վրայ չէ այժմ) կառավարել ուսումնարանը : Խալիպեան ուսումնարանը բացուելէն քանի մը ժամանակ ետքը խորէն վարդապետը կու գայ Թէոդոսիա և հայկաբանութեան դասատու կը նշանակուի : Բայց որովհետեւ անոր և որպէս իր նմանեացը առաքինութեանցմէ մէկն ալ անսահման փառամարտութիւնն է , ինչ կ'ընէ չըներ վերատեսչի օգնական կը կոչուի 1500 մանէթ տարեկանով : Բաց յայդմանէ յատկապէս անոր համար կառք և զոյգ մը ձի կը գնուի ուսումնարանէն , որ վերսթ մը քաղաքէն դուրս է , քաղաքերթեւեկութիւն ընելու համար , սենեակներ կը զարդարուին եւ այլն : Խորէն վարդապետին վերատեսչի օգնական նշանակուած օրէն ուսումնարանին մէջ բաբիլոնեան խառնակութիւնը կը ախրէ , դժտութիւն տեսչին ու խորէն վարդապետին

մէջ, գժտութիւն վերջնոյս ու վարժապետաց և աշակերտաց
 մէջ. գժտութիւն տեսչին, վերատեսչին ու վարժապետաց
 մէջ, մէկ խօսքով իրար անցում մը՝ որ ուսումնարանը տակն
 ու վրայ անելու կ'սպառնայ. . . . Տեսուչը դասատուութեան
 կամ ուրիշ բանի մը վերաբերեալ կարգադրութիւն մը կ'ընէ,
 խորէն վարդապետն ալ իսկոյն կ'ենէ անոր հակառակ ուրիշ
 կարգադրութիւն մը կ'ընէ և տեսնելով՝ որ վարժապետք կամ
 աշակերտք տեսչի կարգադրութեանը կը հնազանդին ու ի-
 ընններն ապօրինի կը ճանաչեն, ճեղղիթական խարդախ մի-
 ջնցներու կը դիմէ. վարժապետաց և աշակերտաց մէջէն իրեն
 արբանեակներ կ'որոյս և մէկ կողմէն ինքն անձամբ, միւս
 կողմէն իր արբանեակաց ձեռքով կ'սկսէ անդադար ամբաս-
 տանութիւնք ամբատանութեանց, չարախօսութիւնք չարա-
 խօսութեանց վրայ բարդել տեսչին վրայ: վերջապէս բանը
 այն տեղ կը հասնի, որ տեսուչը կ'ստիպուի իր հրաժարակա-
 նը տալ: կարգը կուգայ վարժապետաց, մէկը խորէն վար-
 դապետի ողբերգութեանը հաւնած չէ, միւսը կատակերգու-
 թեանը, երբորդն անոր պուետական քանքար կամ անկեղծ
 աղգափրութիւն ունենալուն վրայ երկբայութիւն ցուցնելու
 յանդգներ է, մէկն ալ ելեր անդուռն բերնով անոր արար-
 մունքը ու իր աստիճանին անվայել վարքը պախարակեր է,
 եւայն եւայն: Ուստի և այդ ազատախօս և անկրօն մարդոց
 վարժապետութիւնը աշակերտաց բարոյականին ու Հայաստան-
 եաց ուղղախառ դաւամութեանը վտանգաւոր ճանաչուելով՝
 հալածուեր. իսկ խորէն վարդապետին առաքինի և բարե-
 պաշտ արբանեակները վարձատրուեր ու փառաւորուեր են ՚ի
 փառս միոյն Աստուծոյ և ՚ի բարգաճառանս խալիպեան ու-
 սումնարանին և համօրէն Արամեան գրոհիս: Գանք հիմա ա-
 շակերտաց. ասոնց մէջ ալ երկպառակութեան, մատրնչու-
 թեան, լրտեսութեան և ընկերատեցութեան հոգին մինչեւ
 կատարելութեան կատարը կը բարձրանայ և ահա ինչ պատ-
 ճառաւ աշակերտաց վարուց զեղծմանը առջեւը առնելու ու
 անոնց սրտին մէջ մաքուր բարոյականի ու կրօնի սկզբունքնե-
 րը տարբարցնելու համար՝ ամեն մէկ դասարանի մէջ 5-6 լըր-
 տեսներ կընշանակուին, որոց պաշտօնը ընկերակցաց բարքը
 վարքը դիտել և խօսակցութեանցը ականջ դնել ու տեսած-
 նին ու լսածնին իսկոյն խորէն վարդապետին հասցընել կ'ըլ-
 ցայ: Բայ յայսմանէ բոլոր դասարաններուն մէջ վրանին ծա-

կով Կոյ արկղներ կը դրուին, որ ամեն աշակերտ իր ընկերակցաց յանցանքները անգործապիւ թղթի մը վրայ գրէ ու իր դասարանին արկղին մէջ ձգէ, որպէս զի շարաթէ շարաթ այդ մեղսացուցակները կարգացուելով՝ յանցաւորները պատժուին ՚ի քառութիւն և ՚ի թողութիւն մեղաց իւրեանց: Կեցցէ իգնատիս Լոյոլա: Ս. յդ. դժոխային դրութեան հետեւանքներէն մէկը յիշեմ. վերին դասարանի աշակերտներէն մէկը ուսումնարանի կառավարութեանը վրայ հօրը դադար փար մը տալու մտքով՝ իր նամակին մէջ խորէն վարդապետին քանի մը դործողութիւնքը կը պատմէ և նամակը խրկելէն առաջ՝ իր համամիտ և մտերիմ ընկերներէն մէկուն կը կարգացայն: Քիչ մը չանցնիր՝ խորէն վարդապետը յանկարծ վերին դասարանի աշակերտները ուսումնարանի գահալիճը կը ժողովէ ու նամակագիր աշակերտին գլխուն հրապարակաւ անէժ. ք ու հայհոյանք թափելէն ետքը, խայտառակութեամբ պատժելն ու ուսումնարանէն դուրս վաճառելը մէկ կ'ըլլայ: Կիմացուի վերջապէս որ վերոյիշեալ համարս « Ժողովը նամակն ընկերին արկղէն դողցեր ու տարեր խորէն վարդապետին սուրբ գարշապարացը մատուցեր է: Փոթորիկ մըն է կը փրթի, վառնտուած աշակերտի հարազատ ընկերները ոտք կ'ենեն, ձայներնին կը բարձրացնեն, նամակագրի վերադարձն ու նամակագողի վաճառելը կը պահանջեն՝ յայտնելով միանգամայն որ եթէ այդ արդարացի պահանջմունքնին չկատարուի, զիրենք ալ տուն ճամբեն: Խորէն վարդապետը իր իշխանութեանը վրայ վատահացած՝ սպառնալիք սպառնալեաց վրայ կը թափէ աշակերտաց գլխուն, բայց անոնք այն աստիճան վշտացած ու զսրացած կ'ըլլան պատահած եղեւնագործութեամբը, որ նոյնպէս սպառնալեօք կը պատասխանեն: Աշակերտք կը յայտնեն աներկիւղ, որ եթէ իրենց բաւականութիւն չտրուի, այսինքն լրտեսն ու գողը չվաճառուի ուսումնարանէն ու յանիրաւի վաճառուած ընկերնին վերստին չընդունուի կամ իրենց թոյլ չտրուի ՚ի հայրենիս վերադառնալ, լրտեսը բրամահ կ'սպաննեն ու խորէն վարդապետին ալ նոյնպէս արժանի հատուցում մը կ'ընեն: Սա՛ այդ սպառնալիքը բանի տեղ չը գնելով երեկոցեան պահու նամակագողը ննջարան կը բերէ ու « անհա հետերնիդ պիտի ննջէ, տեսնեմ որ դարչելին անոր մազի թելին դպչելու պիտի համարձակի » ըսելով՝ կը քաշուի: Կէս գիշերուն անբաւական աշակերտները ոտքի կ'ենեն ու

լրտեսը վերանակներով կը վաթատեն ու թմիրոց մը կ'ակսի, որ կրնար թշուառ աղին կեանքին վերջ դնել, եթէ գիշերապահներն ու վերակացուները վրայ չհասնէին ու զինքը չազատէին: Սրխասիրտ խորէն վարդապետը ահու գողի մէջ ընկած ու շունչը բռնուած առաւօտուն կանուխ քաղաք կը վազէ հողաբարձուները յօգնութիւն գոչելու: Կը հաւաքուին ու սումնարան, գործը կը քննեն ու աշակերտաց պահանջմունքը իրաւացի կը գտնեն: Բայց խորէն վարդապետը հողաբարձուաց դատաստանը չընդունիր ու սումնարանը կը մնայ այն աղմուկեալ գրութեան մէջ մինչեւ վերատեսչի (որ այս եղելութեան ժամանակ բացակայ էր) վերադառնալը: Սա գործը կը քննէ ու արդարութիւնը իր օգնականին կողմը ճանաչելով անբաւականներն իբրեւ խռովարկու և անբարոյական սղաք կ'արտաքսէ ու սումնարանէն առանց վկայականի:

Մարտիրոսի գործունեութիւնը:

Քանի մը խօսք ալ խորէն վարդապետին թէոգոսիոյ մէջ ցուցրցած մատենագրական աղգասիրութեանը վրայ: Գիտես որ «Մասեաց Աղանոյն» մէջ ամենէն պատուաւոր տեղը բռնողները, խորէն վարդապետի միշտ ծաղկազարդ չըջանակով բայց ըստ մեծի մասին աննիւթ և անծուծ ոտանաւորներն էին: Օր մը յիշեալ օրագրի պարունակութեանն ու ուղղութեանը վրայ խօսք բացուելով ներկայ անձանց մէջ քանին փափաք կը յայտնեն, որ օրագրին նիւթերը աւելի լաւ և օգտակար բաներ լինին և միանգամայն խորէն վարդապետին ոտանաւորներուն վրայ ալ «նիւթ» մը կ'ընեն: Այս փոքրիկ խայթը բաւական կ'ըլլայ անոր փափուկ ու դիւրագգած սիրտը կարեվէր խոցելու ու հետեւեալ յիշատակի արժանի խօսքերը բերնէն խլելու: «Բաժանորդագին կը վճարեմ տէյի ամեն մարդ իրաւունք չունի օրագիրնուս մէջ ինչ տպուել չտրպուելուն խառնուելու: չէն հաւնիր ու կարդալ չուղեն նէ՝ պատուհաններնուն փակցնեն, ագ մեր գիտնալու բանը չէ»:

Այս խօսքերուն վրայ ես իմ քովէս բան մը աւելցնելը աւելորդ կը համարիմ: Օր մըն ալ խորէն վարդապետը «վարդենիք» անունով զանազան ոտանաւորներու հաւաքածոյ մը 'ի լոյս կ'ընծայէ: Գրքոյքը թէեւ տպագրութեան ծախքին ալ արժեւոր բան չէ, բայց Աստուած «Երեմի» տայ խալիպեան տը պարանին ձրի կը տպուի: խորէն վարդապետի պէս աշխարհա-

Ճանօթ բանաստեղծի մը որ ու գիշեր տքնելով « վարդ ենի քի » պէս գրքոյի մը շարագրել կարող է ՚ի հարկէ բաւական զօրաւոր ապացոյց համարուիլ իր անձնանուէր ազգասիրութեանը : Բայց նա այս առթով կ'ուզենայ ցուցնել նաեւ թէ իւր ազգասիրութիւնը մինչեւ որ աստիճան կարող է հասնիլ : Գերբնական անշահասիրութեամբ մը իր նորատիպ չքնաղ ու ոսկեղինիկ մատենին հարիւրաւոր հատորները լսկոյն Խալիպեան սղարմած հոգի գրատունը կը խրկէ իւրաքանչիւրին 75 կոպէկ արծաթ գին նշանակելով, որպէս զի անոնք գրատան ձեռքով ամեն տեղ տարածուին, և կոստ հայերը, « վարդ ենի ք » ընթերցասիրելով՝ վարդի նման բացուին : կ'ուզեմ բնակ լուսաւորուին : Պիտի ըսես, որ չնչին գրքոյի մը 75 կոպէկ արծաթ գին նշանակելն ազգասիրութիւն կամ անշահասիրութիւն չէ, ընդունիմ : բայց այդ չնչին գրքուկին հարիւրաւոր հատորներէն դեռ հաս մըն ալ փողով չվաճառուած գրատունէն բոլոր հատորներուն գինը 75 ական (այսինքն տասն ու մէկ ու կէս դուրուշէն) հաշուելով՝ կանխիկ ստանալը գերբնական ազգասիրութիւն չէ ու ի՞նչ է հապա : Խորէն վարդապետին այս դործողութեանը պատշաճ անուն մը որոշելը քեզ և քու ընթերցողներուն թողլով՝ քանի մը խօսք ալ ըսեմ անոր այն արարմանցը վրայ, որոնք վերի երեք շրջանէն դուրս են :

Խորէն վարդապետն իր անձնանուէր ազգասիրութիւնը ամենայն կերպով դուրս ցատկեցնել ուզելով՝ յանձն կառնու նաեւ աշակերտաց լուսանկարի արհեստն ալ սորվեցնելու, իր հանգստեան վայրկեաններն անգամ յօգուտ ազդի զոհելով : Այդ ազգաչէն ձեռնարկութեանը համար հարկաւոր գումարը կը տրուի ՚ի հարկէ Խալիպեան ուսումնարանի յորդահոս և առատաբուխ գանձանակէն : Ամեն բան « արդիւն ընէն ետքը, գեր : վարդապետը աշակերտաց լուսանկար սորվեցնելու տեղ իր համակրութիւնը վայելող քնքուշ ախինաց ու օրհորդաց և աշակերտաց դէմքերը հանելու կ'զբաղի : առջինները ձրի, իսկ վերջիններուն, աշակերտաց, փողով : կանոնն ալ այնպէս է եղեր, որ դէմքերնին հանել տալ ուղղ աշակերտները փողը կանխիկ վճարեն : կանխավճարներէն շատերը մինչեւ ցայժմ յուսալու վրայ են թէ օր մը չէ նէ՛ օր մը կամ փողերնին ետ կ'առնուն կամ պատկերնին կ'ստանան : կ'ըսեն նաեւ թէ Խորէն վարդապետը ուսումնարանի փողով

դնուած լուսանկարի գործիքներն ու հանդերձանքը հետը տարեր է 'ի փոխարէն այդ գործին մէջ ցուցըցած արդիւնաւոր քրտնաջան վաստակոցը : Ստոյգ ալ ըլլայ 'ի նշ զարմանք : Խորէն վարդապետի առանձնական կեանքին վրայ երկար խօսելը 'ի զուր ժամանակ կորսունել է : Այսչափը միայն ըսեմ, որ անոր սիրահարութիւնքը, սիրահարական այցելութիւնքը 'ի տուէ և 'ի դիշերի, սիրատոմսակները (1) և այլ զանազան ա-

(1) Այս գրուածքի հեղինակին՝ Խորէն Նարպէյի սիրահարական յարաբերութեանց մասին ասածները ապացուցանելու համար, հարկ կը համարինք այս տեղ այդ սիրատոմսակներէն մի քանին առաջ բերել մեր ընթերցողներին :

Au Lamartine Arménien.

Corène Calfa.

Le portrait de mon frère Corène est un merveille de photographie, de douceur et de lumière. Les yeux me parlent, la bouche me sourit «C'est un frère, tout entier attaché à sa sœur». O Corène pardonnez-moi cette mauvaise plaisanterie, prise à l'altière et malheureuse Phèdre.

Je n'ai pour l'instant, sous la main que de très mediocres photographies de ma fille et de moi. Elles ont été tirées par un vieux parent amateur, qui a fait de son mieux, mais encore bien mal. Voulez-vous les agréer telles quelles sont, cher Corène? Je suis vraiment assez malade, en ce moment pour ne pouvoir poser. Dès que j'aurai de beaux portraits dignes de vous être envoyés vous les recevrez, mon frère.

Acceptez ici cher Poète l'expression sincère de mon admiration pour votre talent si jeune et si charmant, permettez que je m'arrete vite, cependant je ne saurais vous la dire aussi bien en prose n'est-ce pas que je vous l'ai transcrite en vers?

3, 8 bre, 65

Pauline.

Pour Corène

Ta poésie est tout, rayon, flamme, mystère,
Ce qui pare, colore ou parfume la terre;
C'est le vent de l'aurore et la brise des soirs,
Les nuages montant de l'or des encensoirs,
La fleur entre les noirs barreaux de l'esclavage
Les perles que la mer roule sur son rivage,
Le cygne sur le lac, l'aigle au dessus des monts,
Ce que nous dit tout bas le cœur quand nous aimons,
Tantôt la vérité, tantôt la parabole
Et toujours de la vie un éclatant symbole
Il faut l'accord céleste à nos claviers humains,

խորժ կամ անախորժ պատահարները պէտք եղածին պէս նը-
կարող ըլլաւ համար Պօլ—տը—կօկի հանճարն ու գրիչն ունե-
նալու է : Այս իր կոչմանը անվայել և դայթաղալից վարքովն
առակ նշաւակի եղեր էր ոչ միայն ազգայնոց առջեւ , այլև
օտարաց : վերատեսուչը , Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեանը
տեսներով՝ որ իր օգնականին մարիթիմերը ալ պաշտպանել կամ
քելով ծածկել անկարելի է , վեց գիրը գիմացը կը գնէ (1) : Ահա
այսպիսի պատճառներով է որ Խորէն վարդապետը Թէոդոսիան

Et les notes du ciel bondissent sous tes mains
Il faut un baume au mal que le sort nous destine
Et ce baume est pour moi dans tes vers, o Corène,
Cher nom, doux nom, beau nom, qui résume à la fois
Tout ce qu'ont de plus dans les ames et les voix!...

Paris 25 Aout. 65 Pne et Ace.

(1) Թէ ինչպէս այդ վեց գիրը Այվազեան Գաբրիէլ վարդա-
պետն Խորէն վարդապետին առաջը կը գնէ եւ թէ նրա շէգէկ վար-
ժունքն որ աստիճան սահմանէն դուրս կը գայ , ինքը Գաբրիէլ վար-
դապետը առ Սարգիս վարդապետ Թէոդորեան դրած նամակումը
կարճ խօսքով իմաց կանէ , որն որ նոյնութեամբ յառաջ կը բերենք
այս անդ ընթերցողին , իբրեւ անհերքելի վաստ այս գրուածքին :

Բազմարդիւն Տէր իմ եւ հայր ցանկալի :

Յուսամ Գերապատիւ հայր , զի Հէքիմեանց պատմեաց ձեզ լի-
ով , որպէս պատուիրեալ էի նմա , զհանգամանս իրաց կողմանցս
այսոցիկ , ընդ որս եւ զիմա բազմալտանդ կիրս՝ ոչ միայն յերեսաց
կաթողիկոսին եւ յօգնաթիւ խուժանի նախանձոտաց եւ հակառա-
կորդաց , այլև ուստի թերեւս ոչ էր ինձ կարծելի , այսինքն Խորե-
նայ Գայթայեան , որում զվարդապետ անունն դանդաղի տալ բերան
իմ , քանզի զար քան զարդակերթ խորեքսի և քան զքառայ ապերախօ վարե-
ցաւ նա ընդիս 'ի վերջնումս յայսմ տարւոջ :

Արդէն ատելի էր նա աստանօր մեծաց եւ փոքունց 'ի պատ-
ճառս անտանելի շէգէկութեանցն իւրոց , յորս յաւելեալ 'ի վերջին
ժամանակս եւ զաղերասան քնացս եւ զարանս անվայելս եւ աշխարհական
երիտասարդի թող թէ եկեղեցականի , եբաց 'ի վերայ իւր գրե-
րանս ամենայն ժողովրդոց կողմանցս , այնպէս զի 'ի դարձին իմում
'ի Փեթրպուրդէ ստիպեցայ ուղւոյ առնել զնա աստի շտապ տագնա-
պաւ , զի մի սպառսպուռ քանդամմը եղձանիցի ամենայն յոր վաս-
տակեալն էի 'ի վեցից ամաց հետէ :

Ոչ է հարկ ասել՝ թէ դժգոհութեամբ մեկնեցաւ նա ստտի ,
մանաւանդ յետ լսելոյ յինէն զսարսափելի կայծակունս կշտամբա-
նաց , զորս թափեցի 'ի դուրս անխեղ անգրասին , եւ սակայն ընդ մեկ-

կը թողու ու Պօլիս կը դիմէ : Գիչ մը ժամանակէն զարմացմամբ կը լսենք, որ հոն զինքը նախ վանքերը բարեկարգելու համար « յանձնաժողովին » անդամ կը նշանակեն և ապա քարոզչութեան վսեմ պաշտօնը կը յանձնեն : Մէկ խօսքով կրկնիկեանին « ընծայի » ընդունելութեանը արժանի մարդը պատուաւոր ընդունելութիւն կը գտնէ ազգային վարչութեանէն : Միթէ՞ ազգային վարչութեան պատուելի անդամները Խորէն վարդապետին բարուց և վարուցը վրայ բնաւ տեղեկութիւն չունէին : Միթէ՞ Խալիպեան ուսումնարանի կառավարութեանը և անոր վերատեսչին վրայ գրուածներուն մէջ Խորէն վարդապետին « քառասունչորսուց նկարագրութիւնքն ալ չկային : Միթէ՞ յատկապէս Խորէն վարդապետին վրայ հրատարակուած (թէ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի լրագիրներուն մէջ) գրութեանցմէ չէին կրնար իմանալ անոր ինչ արժէքի տէր ըլլալը : Միթէ՞ Խորէն վարդապետը կարող էր իր արատները լուալ, ինքզինքը արդարացնել իւրի պէս վրայ ելնել ամեն մլասապարտութիւն, ամեն անկարգութիւն Գաբրիէլ վարդապետին վրայ բեռցնելով : Շատ լաւ գիտեմ, որ ազգային վարչութեան պատուելի անդամները գէթ փոքր 'ի շատէ կը ճանաչէին Խորէն վարդապետին, բայց անտարակոյս « ուսեալ մարդ է, կարելի է, որ օգտակար ծառայութիւն մը ընէ ազգերնուս, պէտք է անոր սիրտը շահել », ըսելով պատուասիրեր ու պաշտօն տուեր են : Թէ ի՞նչ հատուցում ըրաւ Խորէն վարդապետը այդ պատուասիրութեան ու ընդունելութեան փոխարէն, քեզ լաւ յայտնի է :

Այսչափը, ինչպէս որ վերը ըսի քու կողմէդ ենթադրած հարցմանցդ անուղղակի պատասխան մ'ալ կրնայ ըլլալ : Իսկ ասկէց ետքը կրնամ ուղղակի պատասխան ալ տալ նոյն հարցմանդ :

Նեկ նորա 'ի քաղաքէ աստի եղև խաղաղութիւն մեծ, ուրախ եղևն ամենքեան 'ի Հայոց եւ 'ի Ռուսաց մինչև 'ի Թաթարս եւ 'ի Հրեայս, եւ ուսումնարանն ամենայն բարեկարգութեամբ յառաջէ արդ ողորմութեամբն Աստուծոյ :

Մնամ գերյարգոյ Տեառնդ

Թէոդոսիա 26 նոյեմբեր 1864. Խոնարհ ծառայ

ԳԱՔՐԻԵԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ

Տես, Թէոդորեան Մարգիս վարդապետի, Պարոն-Նի-ն Մորաբ-է-ն Հայկազեան վարժարանաց և Միխիլարեան աբբայից : (Հատ. Ի. երես 456) :

Երբ վեհափառ կաթողիկոսը Պրուսայէն Պօլիս կու գոյ
 և կը տեսնէ, որ ուսեալ երիտասարդ վարդապետ մը իր ան-
 խահեմ վարքովը, իր կոչմանը անվայել լինելուն անարդ-
 ու վճատ վիճակի մը մէջ ընկեր է, կը մտածէ նախ որ եթէ
 զինքը այդ վիճակէն ազատող մը չըլլայ՝ կարող է օրէ օր ա-
 լելի խռովութեանց և դայթակղութեանց առիթ տալ և երկ-
 րորդ՝ թէ կարելի կ'ըլլայ ուղղել բարի ճանապարհ ձգել և
 օգտակար մարդ կացուցանել զնա՝ հայրական խնամք ու հըս-
 կողութիւն ունենալով վրան։ Բաց յայտմանէ թէ ազգային
 վարչութեան և թէ ազգին երեւելի անձինքներէն կը խընդ-
 րեն վեհափառին որ տանէ զ'ա Էջմիածին, Պատրիարքա-
 ըանն ալ պաշտօնական նամակաւ ուղեկից կը կարգէ զնա
 կաթողիկոսին։ Ահա ինչ պատճառներով կ'երթայ Խորէն վարդա-
 պետը Էջմիածին։ Այն տեղ կարճ ժամանակի մէջ, Խորէն վար-
 դապետը իր կեղծ-որդիական հլութեամբն ու հնազանդու-
 թեամբը, ցածուն, համեստ ու դողտրագողտրիկ ընաւորու-
 թեամբը անստգիւտ սրբակեաց վարքովը բոլորովին կը գրա-
 լէ վեհափառի սէրն ու յարգանքը։ Վերջապէս նա՝ իրրեւ
 հաւաստիք իւր ջերմ ու անձնանուէր հայրենասիրութեանը
 ստորագրութիւն կու տայ վեհափառին՝ թէ ինքը կը պար-
 տաւորի երեք տարի մնալ Էջմիածին գրատունը կարգի ձը-
 գելու, սպարանի բարեկարգութեանը ու կատարելագործու-
 թեանը հոգ տանելու, նորընծայ սարկաւազաց և վարդա-
 պետաց ուսում տալու։ մէկ խօսքով ամեն բանի իւրովսանն
 նպաստաւոր և գործակից լինելու համար։ Ահա այս կեր-
 պով վեհափառ կաթողիկոսին սիրտը դրաւելէն ու հաւա-
 տարմութիւն ստանալէն ետքը եպիսկոպոսութիւն ձեռք կը
 ձգէ, «ուսումնական յանձնաժողովին» անդամ կը կարգուի
 և վերջապէս յանուն Բերայի ժողովրդեան արդէն յայտնի բո-
 վանդակութեամբ կոնդակ մ'ալ կը խլէ։

Վարը ըսելիքներէս պիտի տեսնես՝ թէ ինչպէս որ ազ-
 գային վարչութեան պատուաւոր անդամները չարաչար սը-
 խալուեր էին Խորէն վարդապետէն ազգօգուտ ծառայութիւն
 մը սպասելով, նոյն սխալմանց մէջ ընկեր է և վեհափառ կա-
 թողիկոսը նոյնը սպասելով Եպիսկոպոս Խորէնէն։

Խորէն Եպիսկոպոսը կ'իյն ծննդեան գոտի յէն

Վեհափառ կաթողիկոսը Էջմիածնէն 'ի Պետրբուրգ ը-

ներու ճանապարհորդութեանը ուղղելից կընտրէ եւ զխորէն
 էպիսկոպոսը իբրեւ հաւատարիմ ու անձնանուէր մարդ մը
 «բայց այս տեղ մերկանդամ դուրս կուգայ իսկական ներքին
 մարդը իր սքողեալ առինսնէմբն ու խորէն էպիսկոպոսը քանի
 հիւսիս կը մտնեայ այնչափ առտել կը բարձրացնէ իր գիմաւ
 կը և վերջապէս Պետրբուրգ հասնելէն ետքը բոլորովին կը
 մերկանայ զայն : Բոլոր ճանապարհին սա՛ իր անվայել վարքո-
 վը, անզգամութեամբը ու զէզէկոնիւնէրովը շատ վիշտ և տը-
 հաճութիւնք կը պատճառէ վեհատիառին, որ վիճակն ալ որոտք
 կը կոխէ ամենայն կեղծաւորութիւն և մարդեբուզութիւն կը
 բանեցնէ ժողովրդականաց գլխաւորներուն սիրտը որսա-
 լու և առաջնորդութիւն ձեռք բերելու համար : Խորէն ե-
 պիսկոպոսի Մոսկուայի և Պետրբուրգի արարմունքը արժանի
 են առաւել մանրամասն նկարագրութեան : Մոսկուայի լա-
 զարեան ճեմարանի հայատեաց վերատեսուչը Բարօտ անուն
 իր անիրաւ բռնաւորական կառավարութեամբը իրեն դէմ կը
 գրգռէ մերազնեայ աշակերտները, ասոնք օր մը ձեմարանին
 դահլիճը կը հաւաքուին և կը պահանջեն, որ վերատեսուչը
 պաշտօնէն հրաժարուի : Վերատեսուչը այս բանը տեսնելով՝
 իսկոյն Պոլիցիական զինուորներ կը կանչէ և գործին քաղա-
 քական ապստամբութեան նշանակութիւն տալով՝ աշակերտաց
 մէջէն հինգ հոգի բանտարկել կուտայ : Յետոյ այդ բանտար-
 կեալները ոչ միայն ձեմարանէն կարտաքսուին, այլ և զինա-
 կիր պահանակներով ՚ի հայրենիս (կովկաս) կը ճամբուին, այդ
 աշակերտները դեռ ճանապարհ չձգուած խորէն էպիսկոպոսը
 կը հասնի Մոսկուա ու մեր համազգի եղբարքը տեղն ՚ի տե-
 ղը կը պատմեն անոր Բարօտի անօրէն արարմունքը : Նա ըս-
 կըզբան ինքրդինքը Բարօտին թշնամի և հայ աշակերտաց ի-
 ըրաւանցը պաշտպան կը ձեւացնէ, կսկսի իր ազգասիրական
 զգացմունքը հեղուկ հայ հասարակութեան առջեւ և այլն :
 Բայց յետոյ քիչ քիչ Բարօտի բարեկամ և համախոհ ազգայ-
 նոց միջոցիւր անոր հետ այնպիսի սերտ բարեկամութեան կա-
 պերով կը միանայ, որ տեսնուած ատեննին մէկդմէկ գրկա-
 խառն համբուրիւ կը դիմաւորեն և mon cher, կըսեն միմեանց :
 Մէկ շաբաթէն վեհ . կաթուղիկոսն ալ կուգայ Մոսկուա վե-
 հափառը Բարօտի հայատեաց բնաւորութեան ու հայ աշա-
 կերտաց գլխուն հասուցած շարեացը անտեղեակ ըլլալով, շատ
 պատուով ու սիրով կընդունէ զինքը իբրեւ հայկական ու

սու մնարանի վերատեսուչ և երախտեաց տէր մարդ և իր մօտ ճաշի կը հրաւիրէ : Յետոյ երբ վեհափառը կիմանայ թէ նա այդպիսի չարիք հասուցեր է հայ աշակերտաց և թէ խորէն եպիսկոպոսը ո՛չ միայն աշխատած չէ անոնց իրաւունքը սլաշտ պաներու , այլև բողբոլիւն անտարբեր մնացեր է գործին , ծանր յանդիմանութիւն կընէ վերջնոյն թէ ինչո՞ւ թագուցեր է իր մէ Բարօտի անօրէնութիւնը : Խորէն եպիսկոպոսը կը պատասխանէ թէ՛ այդ իրեն գործը չէր : Մինակ այդ չէ խորէն եպիսկոպոսի քաջագործութիւնքը : Նա Մոսկուա բնակող հայ բողբականի մը հետ կը համաձայնի որ Հայոց ազգի լուսաւորութիւնն ու յառաջագիմութիւնը այն ժամանակ միայն կարելի կըլլայ՝ երբ Հայոց մէջ բողբականութիւն տարածուի : Հայկաբանի մը հետ ունեցած խօսակցութեանը մէջ ալ կը յայտնէ թէ հայոց լեզուի քերականական ձեւերը շատ թերի են և թէ նա գերանուան իգականը ո՛չ գործածելու է , եւ այլն : Յիրաւի այդ անպիտան իգատեաց գերանունը շատ գժուարութիւն կը պատճառէ մեր եպիսկոպոսին իր անորոշութեամբը , որովհետեւ անոր մտածութեանց և խօսակցութեան առարկան է , ըստ մեծի մասին իգական քնքուշ սեռը : Խորէն եպիսկոպոսը տեսնելով որ ոչ մի տեղ վիճակաւորի պաշտօն ձեռք ձգելու յոյս չկայ՝ Բարօտի և անոր համախոհներուն միջնորդութեամբը կաշխատի հայկաբանութեան ուսուցչապետի պաշտօնը խլել Մսեր Մագիստրոսի ձեռքէն : Գժբաղդաբար այդ ալ չէ յաջողեր , որովհետեւ ինչպէս որ լսեցինք , եթէ լազարեան իշխանը առանց վեհ , կաթմուղի կոսի հաւանութեանը ընդուներ զՆա իր ձեմարանը՝ նա , եպիսկոպոսը , պիտի ստիպուէր հրաժարել եպիսկոպոսական աստիճանի արժանութեանցմէ : Գնանք հիմա Պետրբուրգ : Այն տեղ խորէն եպիսկոպոսի «գրասիրական» քաջագործութիւնքը առաւել բազմադիմի են եղեր : Ի սկզբան նա շատ բարի տպաւորութիւն կունենայ տեղւոյն հայկազն հասարակութեանը վրայ , բայց որովհետեւ բաւական երկար (ամիս մը) կը մընայ հոն , ուստի և կամաց կամաց «բռնեք» կը բացուին և մեր պատուական Հայերը շատ կը ցաւին որ մայրաքաղաքի մը լուսաւորեալ հասարակութիւնը այդպիսի «չձեռք» եպիսկոպոսէ մը խաբուեր է . . . Պէտք է ըսել որ մեծ բաղդաւորութիւն կըլլար , եթէ ուրիշ տեղերու հայ հասարակութեանց մտորութիւնն ալ սյսպէս կարճատեւ ըլլար և այսպիսի վստահան ու

նենար թէ խորէն եպիսկոպոսին և իր նմանեացը և թէ առ հասարակ ամեն ազգային խնդիրներու և դործերու նկատմամբ : Ռուսաց տէրութիւնը խորէն եպիսկոպոսին Աննայի երկրորդ աստիճանի շքանշանը կը պարգեւէ : Սա սաստիկ կը վերաւորուի որ իրեն այգպիսի ստորաստիճան շքանշան կուտան և կսկսի պատէ պատ ընկնիլ որ այն ետ առնուն ու տեղը առաւել բարձրաստիճան տան : Ինչպէս որ վայել է երեք միլեօն Տաճկաստանի հայոց պատգամաւորի մը : Կարելի է , որ դուն , Տաճկաստանի Հայ և մանաւանդ Պօլսոյ բնակիչ ըլլալով , չգիտնաս թէ խորէն եպիսկոպոսը Տաճկաստանի Հայոց կողմէն պատգամաւոր գրկուեր է 'ի Ռուսաստան , ու բեմն ցընծայէք և ուրախ լերուք , Տաճկաստանցի Հայեր , որ այգպիսի արժանաւոր երեսփոխան ունիք : Կարելի է չգիտես նայնպէս թէ նա ոչ միայն Տաճկաստանի Հայոց երեսփոխան է , այլ նաեւ Բերայի Սրբեպիսկոպոս կամ ինչպէս որ ինքը կըսէ և տպել տուեր է իր այցելատունակներուն վրայ . Archivéque arménien de Péra , կատակ չկարծես , նա իրօք առանց վեհափառ կաթողիկոսի գիտութեանն ու թոյլտուութեանը զանազան պաշտօնական անձանց այցելութիւն կ'ընէ և ամեն տեղ ինքըղինքը Բերայի վիճակի Սրբեպիսկոպոս և Տաճկաստանի Հայոց պատգամաւոր կանուանէ : Այդ չըլլալու եպիսկոպոսը աներեսութիւնն ու անամօթութիւնը այն տեղ կը հասցընէ , որ կիւրակէ օրերը վեհափառ կաթողիկոսին հետ եկեղեցի գնալու տեղ Ռուսաց եկեղեցիները (1) քարշ կուգայ Ռուսաց համակրութիւնը զրաւելու համար և իր վրայ քնքուշ սեռին ուշադրութիւնը դարձնելու նպատակաւ : Կարճ ժամանակի մէջ շատ մը Ռուս տիկնանց և օրիորդաց հետ ծանօթութիւն ըրեր է և ամեն մէկուն շնորհեր է իր կենդանագիրը ու այցելատունակը այսպիսի վերնադրով , « Corène Nar-Bey archévêque arménien de Péra » : Քանի մը անգամ գիշերը ժամը 2—3 ին տուն կը վերադառնայ և երբ կը հարցնեն ուշանալուն պատճառը , « աղջկանց ուսումնարան գնացեր էի » կըսէ : է՛հ

(1) Այդ եկեղեցեաց մէջ նա Ռուսաց պէս յուճաճու կը խաչակրէ եղեր երեսը : Այդ բանը անանելով շատ մը հետաքրքիր Ռուսներ կու գան Հայոց եկեղեցին ստուգիլ իմանալու համար թէ արդեօք բոլոր Հայերն ալ իրենց պէս կը խաչակրէն երեսնին , բոլոր Հայերն ալ Քաղկեդոնի ժողովը ընդունեն թէ միայն այդ ուսեալ եպիսկոպոսը :

Լինչ կըլլայ եղեր երբեմն աղջկանց ուսումնարանաց ալ յայց երնել և քիչ մը ուսման վրայօք խորաթել, Մեր եպիսկոպոսին կէս գիշերուն աղջկանց ուսումնարանաց այց ելածին լուրը բոլոր մայրաքաղաքիս մէջ կը տարածուի և օտարազգիներուն մերազնէից պատահած ատեննին առջի հարցմունքնին այս կըլլայ . « ձեր եպիսկոպոսին գիշերով աղջկանց ուսումնարաններ պըտըտելը իրա՞ն է » : Կրսեն թէ վեհափառ Կաթողիկոսը քանի անգամ խրատեր և յանդիմաններ է զնա հայրաբար . բայց նա ոչ միայն զգաստացած չէ , այլև յանդգներ է Լազարեան իշխանին երթալ և լալով դանգատիլ թէ Կաթողիկոսը զինքը կը հալածէ և անոր (իշխանի) պաշտպանութիւնը աղերսել :

Վերը ըսածներէս գիտես արդէն թէ խորէն եպիսկոպոսը ստորագրութեամբ պարտաւոր էր երեք տարի Էջմիածին մընալ և վեհափառ Կաթողիկոսի ազգային ձեռնարկութեանցը գործակից ըլլալ, իմացար նոյնպէս թէ Լինչպէս նա յետոյ ամեն ջանք 'ի գործ կը դնէ վիճակաւոր առաջնորդի կամ Լազարեան ճեմարանի մէջ ուսուցչապետութեան պաշտօն ձեռք բերելու : Սակայն վերջ 'ի վերջոյ տեսնելով, որ Կաթողիկոսը լաւ հասկացեր է թէ իր գրաւոր խոստմունք տուածին և թէ Էջմիածնի մէջ ցուցցած որդիական հրութեան և անձնուէր հայրենասիրութեանը նախատակը և թէ առանց Կաթողիկոսի հաճութեանը անկարելի է Ռուսաստանի մէջ յաջողութիւն գտնել, գիմակը կը բանայ և կը յայտնէ որ՝ ոչ թէ երեք տարի , այլ երեք շաբաթ անգամ չկարող մնալ Էջմիածին իբրև թէ օգի վատութեանը պատճառով և կազաչէ , որ թոյլ արուի իրեն Պօլիս վերադառնալ : Վեհափառ Կաթողիկոսը թէեւ լիակատար իշխանութիւն ունէր բռնել տանել զնա Էջմիածին , բայց , կը զիջանի անոր աղաչանացը և կը հրամայէ , որ շուտով հեռանայ : Այժմ կը մնայ մեզ անհամբերութեամբ սրտի սպասել թէ այդ խորէն նա՞նք Բէյ Բէրայի Սրբեպիսկոպոս և Տանկասթանի Հայոց պատրիարքը Լինչ ընդունելութիւն պիտի գտնէ այդ տեղ : Եթէ այդ եպիսկոպոս Բէյը բարեհաճէր ունկն մատուցանել մեր խորհրդին՝ յանկեղծ սրտէ կըսէինք իրեն , որ Պօլիս չերթար , այլ Փարիզ երթար ու եպիսկոպոսութենէն ալ հողեւորականութենէն ալ վազ գալով եղբօրը օրինակին հետեւէր : Ոչ կարէ ծառայ երկուց տէրանց ծառայել » : Մեր կարծիքով անհամեմատ առաւել լաւ է ան

խարդախ համարձակութեամբ վայելել աշխարհային կեանքի բարիքը, քան թէ անամօթ և գայթակղալից վարքով յառակա նշառակի և նախատանաց ընել հողեւորական սուրբ կոչումը : « Որ ոք գայթակղեցուցանէ զմի 'ի փոքրկանցս յայտցանէ, լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պարանոց նորա և ընկըղմեացի 'ի խորս ծովու » կըսէ Աւետարանը :

Ես լաւ գիտեմ, դուն ալ գիտես, ազնիւ բարեկամ, որ Նառ Բէյ եպիսկոպոսներու նման պարոնները հողեւորական կոչումը կընդունին ոչ թէ զանձինս իւրեանց վասն արքայութեան երկնից ներքինիս առնել կամելով, այլ անոր համար, որ այդ կոչման միջոցիւր դիւրաւ յագուրդ տալ կրնան իրենց աշխարհական ցանկութեանցը : Նառ Բէյ մը առանց հողեւորական կոչման կարող է միայն շատ չափաւոր կեանք վարել : Իսկ զլուխը վարդապետական կամ մանաւանդ եպիսկոպոսական վեղար մը անցնելով՝ առանց բրտինք թափելու առանց հողերու և տառապանաց ենթարկուելու շատ երջանիկ և պորտապարար կեանք պիտի կրնայ վայելել : Մեր մէջ Նառ Բէյ եպիսկոպոսին նման հողեւորականներ շատ կան և յանցաւորը ոչ այնչափ անոնք են, որչափ մենք զգուժ գլուխ աշխարհականքս » զի ուր գէշն իցէ անգը ժողովեացին արծուիք » : Այնչափ երկար խօսելուս նպատակը ոչ այնչափ Նառ Բէյ եպիսկոպոս մը խայտառակել կամ խարբայ ազգասիրի մը դիմակը պատուտել ու այն պատուտած դիմակովը զինքը աստակել էր, որչափ, որ մեր բարեմիտ համազգի եղբարքը 'ի զգուշութիւն հրաւիրել որ ամեն վեղարի տակ սուրբ Սահակ, Մեսրոպ կամ Ներսէս չտեսնեն, ամեն պոռոտախօս սընապարծ բաղդախնդիրը վարդանի տեղ չընդունին : Քանի որ մեր մէջ կայ այս տղայական պարզամտութիւնն ու դիւրահաւանութիւնը մեր պապերու արանգած բորբոսած ժառանգութիւնը, գեռ շատ Նառ Բէյ եպիսկոպոսներ, շատ Նառ Բէյ ազգասէրներ, պիտի յայտնուին մեր մէջ և շատ նիւթական և բարոյական փառանք պիտի հասցընեն մեզ :

Սերպուխով 1867 Նոյեմբեր 8.

Անյ. Բարեկամը,
(Անունս քերես)

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՐԿՃԵԱՆ